Երեց Քեվին Վ. Փիրսոն
Յոթանասունից

Ով եք դուք իրականում

Մեր Երկնային Հայրը սիրում է մեզ: Նա ցանկանում է օգնել մեզ իմանալ, թե ով ենք մենք: Նա ստեղծել է մեր հոգիները՝ նախքան մենք կգայինք աշխարհ: Մենք բոլորս Աստծո որդիներն ու դուստրերն ենք:

Երբեմն մենք կարող ենք միայնակ զգալ կամ անհանգստանալ, որ երբեք բավականաչափ լավը չենք լինի: Հիսուս Քրիստոսը ճշգրիտ գիտի, թե մենք ինչ ենք զգում: Նա կօգնի մեզ հաղթահարել ամեն մարտահրավեր: Դժվարությունները, որոնց մենք հանդիպում ենք այս կյանքում, կարող են օգնել մեզ ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին, եթե դիմենք Նրան:

Ավետարանն օգնում է մեզ տեսնել մեզ այնպես, ինչպես մեզ տեսնում է Երկնային Հայրը: Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքի շնորհիվ մեր փորձությունները կարող են վերածվել օրհնությունների: Իմացությունը, թե ով եք դուք, և ինչպես է Աստված տեսնում ձեզ, կօրհնի ցանկացած մեկին ցանկացած տարիքում:

Երբ հասկանանք, թե ով ենք մենք՝ որպես Աստծո զավակներ, մենք կկարողանանք կենտրոնանալ այն բանի վրա, թե ըստ Երկնային Հոր, մենք ինչ պետք է դառնանք: Մենք Նրա *հետ* կդիմակայենք մեր մարտահրավերներին: Թեև մենք անկատար ենք և սխալներ կգործենք, մենք կարող ենք հույս գտնել՝ իմանալով, որ Աստծո զավակներն ենք: ●

Հատված Օլիվիա Քիթերմանի և Դիանա Էվելին Նելսոնի հետ անցկացրած հարցազրույցից:

Գտեք սիրելի բաները

Մենք բոլորս տարբեր ենք: Մենք ունենք տարբեր տաղանդներ, հավանում կամ չենք հավանում տարբեր բաներ Բայց մենք բոլորս Աստծո զավակներն ենք:
Օգտագործեք հուշումները՝ աղյուսակը լրացնելու և պարզելու համար, թե այս ընկերներից յուրաքանչյուրին ինչ է հետաքրքրում: Հուշում. Այն, ինչը գիտեք, որ ճիշտ չէ, կողքին դրեք «X» նշանը: Դուք ունեք առաջին օրինակը: Ավարտելուց հետո յուրաքանչյուր սյունակ պետք է ունենա մեկ դատարկ քառակուսի:

1. Դաշնակահարը Ամարան կամ Ջեյդը չէ:
2. Մաքսը մաթեմատիկա չի սիրում:
3. Տղաներից ոչ մեկը որևէ գործիք չի նվագում, կարատեով չի զբաղվում:
4. Կենդանիներ սիրող աղջիկը Ամարան չէ:
5. Կայը միակն է, որ սիրում է բասկետբոլ:

Պար | Բասկետբոլ | Կարատե | Մաթեմատիկա | Կենդանիներ | Դաշնամուր

	Պար	Բասկետբոլ	Կարատե	Մաթեմատիկա	Կենդանիներ	Դաշնամուր
Եվա						
Կայ						
Ահարոն						
Ջեյդ						X
Մաքս						
Ամարա						X